

1 թիւ թող շահի	5000	Ֆրանք
1 » » »	1000	»
3 » » »	1500	»
25 » » »	2500	»

	10000	»

Ահա այս կերպով 40000 ֆրանքի պատկառելի դուրս մը պիտի հասնի ձեռքերէն որ սրանչեւապէս պիտի օգնէ Հիւանդանոցի Հողարարութեան անմիջական պէտքերուն ու մանաւանդ հիւանդանոցին բարգաւաճումին :

Սրբազան Առաջնորդ հայրը, որ սակաւին անունը միայն ծանօթ է մեզի, իւր բարձր հովանաւորութեան տակ առնելով այսպիսի բարեկամական գործ մը, որ գերազանցօրէն կենսական է իր ինքնութեանը մէջ, մէկ անգամեւ պիտի շահի յամբողջ Եգիպտոսայ հասարակութեան սէրը, յարգանքն ու համարումը, որոնք չհարձակալ պիտի ըլլան իրեն :

Վտահ եմ, որ իմ ձայնս արձագանք պիտի գտնէ ու չպիտի խեղդուի :

Վտահ եմ մանաւանդ թէ ամէն առնոք, որ ի վիճակի են այսպիսի ձեռնարկ մը յամբողջութեամբ, չպիտի զլանան իրենց անյիւ աշխատութիւնը :

Եւ ամէն անոնք որ պիտի մասնակցին այս վիճակահանութեան տունակ մը կամ երկուք գնելով, Ազգ. Հիւանդանոցի օգտակար ըլլալու շնորհն գոհունակութիւնով հանդերձ, դեղեցիկ յոյսը պիտի ունենան 100-5000 ֆրանքի պարգև մըն ալ շահելու :

Հարկը քսան որդի-որդուհիներու մեծանոյն աչքերը մեզ կը դիտեն այս պահու աղերսարկու նայուածքով մը. նայուածքովը անգիտակից տիրութեան ու յաւի, զորս մենք միայն պիտի կրնանք ամոքել . . . :

Յուսախար չ'ընենք զիրենք :
7 Մարտ 1901 ՏԻԳՐԱՆ ՀԱՃՂՆԷԼԻՆ
Զակաղիկ

ԲԵՆԵՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱԹՈՒԹԻՒՆԷՔ

ԲԱՐԵՎԱՍՏՈՒԹԻՒՆ

(Շարժ. նախորդ թիւին եւ վերջ)

Յաճախ վիճարանութեան տարկայ կղած է թէ որն է լուսավոյն բարեկամը. ան որ աւելի կը սիրէ՞ թէ ան որ աւելի կուտայ : Անչուս կրկու կողմէն ալ կրնայ շատ բան ըսուիլ : Մինչ անուրանայի է թէ մեծ սիրտանք կայ ճշմարիտ բարեկամի մը անկեղծ սիրտն մէջ ձախորդութեան օգտակար միւս կողմէն ալ անգին է օգնութիւնը եւ նկատելի զոր այսպիսի բարեկամ մը կրնայ ընձեռել ի հանդէպ ժամուրայ թող անոնք որ այս կենաց մէջ ճշմարիտ բարեկամ մ'ունենալու բարեբաղդութիւնը ունեցած են, վերլուծեն հաճոյքը բարեկամական յարաբերութեան, եւ պիտի տեսնեն թէ ո՛չ իր բարեկամին սէրը եւ ո՛չ ալ անկէ ընդունած աջակցութիւնն է ոսկի շղթայն, որով կրկու սրտերը իրարու հետ յճուած են, այլ աննկարագրելի, անտեսանելի, անլուծելի թաղուն ոյժ մը, զոր առ ի չգոյն լուսավոյն բարեկամի ներքին արժանիք կը կոչենք : Սէր եւ աջակցութիւն այս յատկութեան տրոհելն են եւ ոչ թէ պատճառը : Անիկա անկեղծ է, կըրնաս վտանգի անտար : Աշխարհն կրնայ խաբարայ եւ անհաւատարիմ ըլլալ, բայց դուն կը ճանաչես սիրտ մը որ բնաւ չկրնար քեզ խաբել :

Բարեկամութիւնը ժողովրդականութիւնն է. ճշմարիտ է թէ «Ան որ շատ բարեկամներ ունի, բնաւ բարեկամ չունի» : Դպրոցի ընկերներ, նոյն թաղի բնակիչներ, ընկերութեան մը անդամներ, նոյն կուսակցութեան պատկանողներ, բաւին ճշգրտագոյն իմաստովը իրարու բարեկամներ չեն : Ասոնք միայն ծանօթներ են : Իրական բարեկամութեան մէջ կրկու հոգիները իրարու հետ հիւսուած են այնպիսի միութեամբ մը, որ անոնց բաժանումը պատակաւ եւ արեւնահոսութիւն առաջ պիտի բերէ : Գաղափարական բարեկամութեան մը օրինակը կը գտնենք Դաւիթի պատմութեան մէջ, ուր ըսուած է թէ Յովնաթանի սիրտը Դաւիթի սրտին հետ կապուեցաւ, եւ Յովնաթան իր անձին պէս կը սիրէր զանիկա :

Բարեկամական սէրը գործնական զգացում մըն է եւ ծառայութիւն մատուցանելէ հաճոյք կ'զգայ : Գեղջիկական հանդերձներ հազուած եւ գլուխը բաց երիտասարդի մը արձանովը : Անոր զգեստին քղանցքներուն վրայ գրուած են մտնաւ կիտանք բառերը, որով բակ կուզուի թէ կենաց եւ մահուան մէջ նոյն է : Ծախտարն վրայ արձանագրուած ամուս եւ ձմեռ բառերն ալ կ'ակնարկեն բարեկամութեան անսիրտութիւն հանդուժանքը յաղորդութեան եւ ձախորդութեան մէջ : Զսիս ուր եւ բազուկը մերկ են մինչեւ սիրտը, զոր ալ ձեռքին ցուցածատը մասնաւոր կ'ընէ հետեւ եւ մտ բառերով եւ այսպէս կը յայտնէ թէ ճշմարիտ բարեկամութիւնն անվճար կը մնայ հակառակ հեռաւորութեան եւ բաժանման :

Բարեկամութեան օգուտները շատ եւ բազմազան են : Ծշմարիտ բարեկամ մը հայելոյ պէս է, որուն մէջ կը անտեսնէ իր նկարագրին ցոլացումը : Անոր հետ մեր ունեցած համակրելի եւ ազատ յարաբերութիւնն ուրիշ որ եւ է բանէ աւելի կը ճանչցունէ մեզի մեր անձնը : Իրարու յայտնելով մեր գաղափարները՝ անոնց մէջ ի նմանութիւն եւ սարքութիւնը կը գտնենք : Այն բաները որ մեզի բոլորովին աննշմարելի էին՝ այժմ կրեւան կուզան : Կարողութիւնները որ անգործածելի մնացիք էին, որովհետեւ անոնց գոյութեան անտեղեակ էինք, մեր բարեկամը ի յայտ կ'ածէ, եւ անոր զբոսմամբ կ'սկսին գործել : Ընթերցանութիւնը մարդս ուսումնական կ'ընէ, բայց բարեկամը անոր պրոբն եւ հոգւոյն վեհութիւնը կրեւան կը հանէ : Քերկաթը կրկամով կը սրուի, եւ մարդ իր բարեկամին կրեւոր կը սրէ : Արքայ տղազան խորհուրդներ եւ մտաւարկութիւններ միտք կը վեղուն եւ ըզըզը պայթեցնելու սուսիճան կը վխտան : կը դիմաւ բարեկամից եւ կը հեղուս զանոնք անոր աշխարհ առանց վերապահութեան, որովհետեւ վտանգ եւ անոր անկեղծութեան եւ գաղանապահութեան, եւ այսպէս արտմութիւնները կը նուազին եւ ուրախութիւնները կը բազմապատկուին : Կը դիմաւ անոր ամեն ատեն եւ ամեն պարագայի մէջ, թէ՛ յաղորդութեան եւ թէ՛ ձախորդութեան մէջ, թէ՛ առողջութեան եւ թէ՛ հիւանդութեան մէջ, թէ՛ հարստութեան եւ թէ՛ աղքատութեան մէջ, եւ վտանգ եւ թէ պիտի չմերժուի : Եւ մինչ բարեկամից պիտի գտնես պատրաստ ձեռք մը քեզ օգնելու, յօժարակամ միտք մը քեզ խրատելու եւ արամալիք կացութիւն մը քեզ ընդունելու : «Բարեկամն ամեն ատեն կը սիրէ» : Եւ յանդիմանելու անոր խօսքերը չեն վերաւորեր, չեն խոցուեր, այլ կը բուժեն, որովհետեւ անոնց մէջ անձնական շահատիրութիւն չկայ : Ինչ որ կ'ընէ քո օգտից համար ըլլալը գիտես կ'զգաս : «Բարեկամին առեւծ վէրքերն հաւապարիմ են» :

ԳԵՐ. ԱՌԱՋԻՈՐԴԻՆ
«Արշալոյս» ի Տնօրինութիւնը հրատարակաւ կը խնդրէ ու Գեր. Յովնէֆ Եպիս. Այվազեան շնորհ ընէ գոհացուցիչ կղանակաւ կարգադրել հաճել հանդուցեալ ԿԱՐՊԵՏ ՆԱԶԱՐԵԱՆԻ թերթիկի խնդիրն, որ կը կարծուի թէ քիչ յետոյ լրագրական էջերը պիտի գրաւէ :

ԳՐԱԿԱՆ ԱՅՍԱՐԿԵՆ
ՇԻՋԱՆՈՂ ԱՍՏՆԵՐԸ
ՏԻԿԻՆ Ս. ՏԻՒՍԱՐ

Անունն ցուել մը, խորունկ կոկիծի մը արտունակութիւնով առ ի Տիկին Սրբուհի Տիւսարի մահուան գոջը . . . :

Հայ իգական սեռը կորսնցնելով այդ մեծ եւ առաջնորդող կրկնը, կորսնցուց ամենէն արի պաշտպանը իր բնաւորութեամբ իրաւունքներուն ամենէն արդար եւ ազնիւ բողոքողը հանդէպ իր կրած զրկանքներուն, ամենէն ճարտար ու պիւրճախօս լեզուն նկարագրող՝ իր կրած բարոյական ու ֆիզիքական շարժարանները, սրտի ու մտքի տաղանայները, նախապաշարուներու եւ տղխութեան գարաւո՛ր լուծին տակ . . . :

Մեր ցաւը այնքան գառն, այնքան կծու հոնգամանք մը չ'առնէր դուցէ, եթէ իր մահուամբ թափու՛ր թողած սուգաբեղին վրայ, արժանաւոր յաջորդ մը կրեւան գալով, ձեռք առնէր արդէն սկսուած Ս. գտորը, եւ քաջարար կուրծք տալով մղէր յարատեւ : կամքի անպատմելի ուժով՝ ազնիւ եւ արդար կրկնը . . . :

Տիկին Սրբուհի Տիւսար, իր երեք գոհարձակիւրով (Մայտա, Սիրանոյ, Արաքսիա) մէկ անգամէն յեղաշրջեց հայ կնոջ ապրելու եղանակին, եւ անոր ներքին ու ընկերական կեանքին նկատմամբ քարեթի ի վեր ընդունուած տգեղ ու ծիծառ գաղափարները, եւ ըստնորում բարբարոս պայմանները :

Իր յուզիչ ու կորովի տողերով նա շնչաց աւելի՛ սուր, աւելի՛ խայթող, այն տարկութեան ու զերտութեան ասոր վիճակը, ու մարդկային ընկերութիւնը լիցեցուցած էր զկիւնն. մինչ րոտութիւնը աւելի՛ արդար, կոչած էր զինքը նու իրական պարտականութիւններու, Սուրբ պաշտօններու համար, այ՛ է՛ մարդկութիւնը ընդունել իր ծոցին մէջ . . . ծնունդ նալ սնորձ . . . սուղանիկ զայն իր կամով, քնացնել իր թեւերուն վրայ՝ որ շինուի Եւ պատրաստել կամքի պայքարին կրկ հասունանալու վրայ է . . . :

Արեւին մտրդ առաջին օրէն՝ ֆիլ պիտի՛ վերէն կնոջ աղբիւրութիւնը, քանի որ բնութեանն աւելի՛ մօտիկ է սնոր . . . եւ այդ ստեղծին աղբիւրութիւնը կը պահէ իր ուժը, որովհետեւ դաբունութիւնէ կամ կրկնուցէ ծագում առած չ'է : Եթէ ոչ շատ շուտով կը խորանկուի՝ այլ՝ սիրտ, զգուսներ, անձնուիրութեան մէջ՝ սակեղծուած է այն, եւ ճիշտօրէն պատճառաւ՝ անդիմադրելի եւ անպարտելի կը դառնայ, եւ չ'տեսնելով ասարիներու ընթացքին, չտիրոհատութեան տարիքին, միշտ կայ ու կը մնայ . . . :

Ուստի եթէ կնոջ բացարձակ աղբիւրութիւնը կ'ընդունինք մարդկութեան վրայ, ինչու ուրեմն լուսավոյն վիճակ մը, կեանքի աւելի՛ աղատ պայմաններ չ'ստեղծիլ անոր համար . . . Ինչ ազնիւ յատկութիւններ իրաւունք ունինք փնտռելու կնոջ աղբիւրութեան մէջ, երբ մենք մեր ձեռքերով կը կասեցնենք ամեն ազնիւ ու բարձր թախչ իր մտքին ու սրտին խորքը իր նկարագրի կը խմորենք նուազագոյն ասոր կուրծեան եւ գոծութեան զգոցներով . . . :

Ո՛վ է պատասխանատուն եթէ մարդկութիւնը օրէօր կ'իջնայ բարոյացալ . . . Փաստերով եւ ապացոյցներով կարելի է հաստատել թէ՛ ուր որ կիւնը բարձր է մնացիք՝ կոնպուն՝ իր արժանապատուութեան եւ ինքնուստիանութեան պատուանդանին վրայ : հոն՝ բարձր մնացիք է նաեւ մարդկութիւնը . . . Կրնանք օրինակեալ մար յիշել Անդրեան եւ Ամբրիկոն . . . Իսկ ուր որ կիւնը նկատուելի իրբեւ անչա՛ս կապալիք, ասիկ մարդոց հաճոյքներուն եւ զբաղմունքներուն համար ստեղծուած տուրկայ՝ հոն՝ կ'աւելի է վեհացած համարիլ մարդկութիւնը օգտակարեւ ազնիւ ու մեծ բան մը գտնու չ'է եկեր անոր ծոցէն . . . օրինակ թուրքիան եւ իր փոքրուրդը . . . : Հայ կիւնը պէտք է՛ մտնայ սր, եթէ քաղաքակրթութիւնը դեր մը ունեցած է իր կեանքի բարոյութեան խնդրոյն մէջ, աւելի՛ եւ շատ աւելի Տիկին Տիւսարի ուժգին եւ արդար

բողոքներուն կը պարտի այն առաւել կամ նը-
ւալ առանձնաշնորհմաներն՝ զորս կը վայելէ
այսօր ընտանեկան, ընկերակցական և հասարակա-
կան խնդիրներու մէջ. թէպէտև այդ ընդգրկու-
մը, այդ վեճի ճիշդ՝ զոր ըրու նա բարձրացը-
նելու համար իր սեպին վարկն ու արժանապատ-
ւութիւնը, իրեն դէմ հանեցին կատարած թըշ-
նամբներու վտանակներ՝ որոնք ուղեցին բզկտել
իր գործը, և սրաց համար արձամարանք ունե-
ցաւ նա միայն, վասնզի ինքը դիտէր կանխա-
թէ լայնը՝ իրեն թշնամբ ունի խաւարը, և թէ՛
հին ժամանակներէ ի վեր ամեն նոր ու լայն
գաղտնարներ, տակաւին իրենց սաղմին մէջ,
տգէա, բարբարոս, և մանաւանդ չոր նախան-
ձէ կուրցած հասարակութենէ մը սրբապղծու-
թիւններ նկատուելով, աքնութեանց, նախա-
տանաց և չարչարանքի գառապարտած են այն
մեծ մարդիկը՝ որոնք յոգացած և ծնունդ ար-
ւած էին ատոնց, և յետոյ չա՛ռ ուշ, դարե-
րու և ժամանակներու ընթացքին մէջ միայն-
կեր անոնց սկզբները վաղուց փառած էին հո-
ղին տակ — « դնա՛ մտիր, եկու՛ր սիրեմ ի օ-
րէնքով, նոր հասարակութիւն մըն ալ փառա-
ւոր կոթողներով անմտացնելու ելաւ անոնց
սխալակը :

(Շարունակելի) ՄԱՌԻ

ՆԱՄԱԿ ԱՂԵՔԱՆԳՆԵՐԻ ԱՍԵՒՆ
Պ. ԱՆԱԹՈՂ ԳՈՒՆՍ ԵՆ ԱՂԵՔԱՆԳՆԵՐԻ ՆՈՅՆ

Հակառակ Պ. Անաթոլ Գրանտի մեկնումին
մասին տարածուած զրոյցներուն, յիշեալը պա-
տահար սր Աղէքանգրիւս անունեցաւ չարք-
շարթի իրիկուն : Տեղւոյ հայերը կարծելով թէ
մեծանուն, ակադեմիական արգէն մեկնում է, ոչ
մէկ պատրաստութիւն (՝) չէին անած զինքը ար-
ժանաւարել յարգանքով ընդունելու համար .
այսու ամենայնիւ, քանի մը երիտասարդներ,
ամեն գործ ձգելով, պէտք եղած պատրաստու-
թիւնները փութանակի տեսնն : Չորս հոգիէ
բաղկացեալ պատգամատարութիւնը մը շարժաթ ա-
ռուտ օրէն Աղէքանգրի Պ. Ա. Գրանտի ներկա-
յացաւ և յանուն Աղէքանգրիոյ հայերուն իր
իրախապիտական զգացումները մտաուց սիշ-
եալին :

Պատգամատարութիւնը Պ. Անաթոլ Գրան-
տին նուիրեց Պ. Արտէն Ետպանեանի մէկ շատ
զեղեցիկ ծովանկարը՝ որու ներքեւը, պղնձեայ
տախտակի մը վրայ նետուեալ արձամագրութիւ-
նը փորագրուած էր ֆրանսերէն .

ԱՌ ԱՆԱԹՈՂ ԳՐԱՆՏ
ԱՂԵՔԱՆԳՆԵՐԻ ՆՈՅՆ
Ի ՆՇԱՆ ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ
1897-1901

Այս թողտեսնելուն առաջինը կը յիշե-
ցնէ Պ. Անաթոլ Գրանտի առաջին բանախօսու-
թիւնը ի նպատակ հայկական գաղտնի և որ զուգու-
գրպարար կ'իջնոր մարտ 9 ին, այսինքն այն
որուան յարած Աղէքանգրիոյ պատգամատարու-
թիւնը ներկայացաւ մեծանուն մատենագրին :
Այդ յիշատակելի բանախօսութեան քառամեայ
տարեգարձը չհշտուեցաւ ուղիւնք մը մէջ զոր
ներկաներէն մին կարգաց և որուն Պ. Անաթոլ
Գրանտ պատախօսեց յուզեալ շեշտերով :

Պ. Անաթոլ Գրանտ իր բանախօսութեան
մէջ խորին շարժակալութիւն յայտնեց իրեն և
ղած համակրութեան ցոյցին համար և յայտա-
բարեց թէ ինքն և իրենները ամեն ջանք ի
գործ պիտի դնեն ֆրանսայի մէջ պատրաստելու
համար զորուոր հանրային կարծիք մը որ ար-
գիւէ կատարածները կրկնութիւնը և աշխարհի
հայց լաւագոյն ասպագային որուն արժանի են,
բաւ, ո՛չ միայն իրենց գործողութիւններու-
վը այլև իրենց բնականոր իմացականու-
թեամբը և այս առթիւ յիշատակեց այն ամեն
նշանաւոր հանձնարները զոր հոյ ազգը աւած է
մարդկութեան՝ հսկանակ խիտ աննպաստ պայ-
մաններու ներքեւ ապրելուն :

Պ. Անաթոլ Գրանտ խոստած սուղերձք
խնդրեց ունենալ, նուիրելու համար զայն իր
միտակ աղջկան :

Ինչպէս նմանապէս պատգամատարներէն
որ եթէ ֆրիզը գրու պատգամութիւն ունենան
չի մտնան իր աւանդ այնքան որուն հասցէն
աւտու իրենց :

Պ. Ա. Գրանտի նուիրուած նկարը սեղ-
ւոյս հայերու իրենց ծննդավայրէ պիտի դրկեն Գր-
անտս : Նուիրելու ծանօթ հայ ժողովուրդ : համար
ժողովուրդին հոնք տնտեսական պիտի դիմ-
ուի :

Հ Ե Ռ Ա Պ Ի Ր Ն Ե Ր

Լոնտոն 8 Մարտ. — Լորտ Բիչնէր Միա-
տըլպարկի մէջ ֆեար. 7 ին տեսակցու-
թիւն մը ունեցած է Պոթա զօրավարին և
ուրիշ պետերու հետ. դեռ արդիւնքը չը
գիտցուիր :

Լոնտոն 8 Մարտ. — Տըլպարկ և միւր-
ուած է. Պոթա զօրավար Սէլըէ սպաննուած
է. Անգլիայի 16 սպաննուած և 20 վի-
րուարուած ունին :

Կ. Պոլիս 10. Մարտ. — Սուլթանը շը-
նորհակալութիւնը յայտնած է Պ. Չինոյիէ-
ֆի Մակեդոնիոյ գօմիթիէն հանդէպ Ռուսա-
կան կառավարութեան բանած դիրքին հա-
մար :

Սուլթանը նմանապէս իր գօմիթիէն
թիւնը յայտնած է տեսնելով որ պետու-
թիւնները որոշած են իրարից, զոն պահել
կրէտէի մէջ :

Լա Հէյ 9 Մարտ. — Հօլանտացիները Աւ-
լինի բերդը (Սաւանթրալի մէջ) առին . 77
ապստամբ սպաննուած և շատերը ալ գե-
տին մէջ խեղդուած են :

Պէրլին 9 Մարտ. — Կայսեր վիճակը դո-
հացուցիչ է և բժիշկները ո՛ր է է կնճու-
տումէ չեն վախճար :

Սպաննութեան փորձէն անմիջաձեւ
յետոյ ամեն վեհապետի կողմէ հեռագիր-
ներով շնորհաւորուած է կայսրը, վասն-
զէն զերծ մնացած ըլլալուն համար. նոյն
հեռագիրներով մազմանքներ եղած են կայ-
սեր փութանակի ապարհմունք համար :

ԻՐԻՒԹԱՆԵՆԵՐ ԵՒ ՀԱՅ ՈՐԲԵՐԸ

« Բազմալէպ » ի վերջին թիւէն կը տե-
ղեկանանք թէ՛ Իրիւթարեան վերապա-
ուելի Հարք ՈՐԲԵՐԸՆԻ հաւաքածոյ դրա-
մէն 300 ֆրանք բաժին հանած են կիպրոսի
Որբանոցին :

Այս առթիւ « Բազմալէպ » Պատ.
Խաւարութիւնը ցաւ կը յայտնէ որ Պալոյ
Որբանոցի պատգամներն Յանձնաժողովը
քննա նիւթապէս ձեռնառութիւն մը չունի
այդ ազգային Որբանոցին, որ իրեն անձ-
նակուէր փորձներու և խնամակալներու
չնորհիւ, ներկայ բազմութիւ հոյ սրբանոց-
ներու մէջ, ամենէն նախաձեռնի կազմու-
թիւնն ունի և որքերու կրթութեան շատ
զուտատելի եղանակաւ կ'աշխատի : Մեր
հոյ հասարակութեան մէջ, կ'ընէ « Բազ-
մալէպ », այդ սրբերու խնամակալութեան
խնդիրը վերին աստիճանի կարեւորութիւն
աւած է. և երբ շատ տեղերէն և շատ
բարեկէր անձերէն ի նպաստ թիւրքահայ
որքերու նուէրներ կ'ըլլան, անտարակալ
ըրգութեան ներկայացնող զինքը, յանուն
ժողովուրդեան համար հետաքրքրութեան
մը կ'ուզեն պիտեալ թէ՛ սրբան ուղբանոց
կայ և ընդհանրապէս այդ նուէրներուն
հասարակապէս ամեն սրբանոց կ'արժանա-
նա՛յ, Այս հարցումը մենք հրապարակ չի
պիտի հանելինք, եթէ վերոյիշեալ կիպ-

րոսի Որբանոցէն չ'ընդ ունենէնք այն նամակը,
որուն մէջ ցաւով արձանագրուած էր իրենց
որբանոցին և Պալոյ Որբանոցի Յանձնա-
ժողովին իսպառ լըծալ լինելն :

Իրիւթարեան Պատ. Հարք վերոյիշեալ
դիտողութենէն կ'իտեի թէ Ազգ. Պատրի-
արքարանի մէջ, ինչ նախագահութեանքով,
պատրիարքին կազմուած սրբախալ խնամա-
կալութիւնն ակնարկով աչտուր թիւններ ի
գործ վըճիւն որքերը հաճապագոյն խնա-
մելու խնդրոյն մէջ :

Արդէն մենք ալ անտես ըրած չ'ենք
թէ՛ ինչպէս դիւանագիտորէն կը շահագոր-
ծուի սրբերու ձեռնը պատրիարքարանի և
անոր ազգաւեաց արքանեակներուն մէջ .
ուստի յարմար առիթ կը սեպենք յայտա-
բարել թէ՛ եթէ պատրիարքարանը ինքնա-
գոհացու՛մ մը ունի կիպրոսի նման որբանոց
մը երեսի վրայ թողլով, պէտք է գիտնայ
որ ժողովուրդը ունի իր մէջ Պատրիարքա-
րաններ, որոնք շատ աւելի կ'արժեն կիպ-
րոսի Որբանոցին համար, քան թէ ազգին
անունը վարկաբեկ ընող պատրիարքարա-
ները :

Չոր օրինակ, ըսենք թէ պատրիար-
քարանք իր . . . անոթ մ տարեկան 5-600
դր. ի նպաստ մը ընէր կիպրոսի Որբանո-
ցին : յայտնի բան է թէ սոսոս փոքրան պի-
տի պահանջեր որ տարեմէ հինգ անգամ
կիպրոսի Որբանոցին մէջ գոհարանական ա-
զօթքներ տեղի ունենային Սուլթան Համի-
տի կենացը : Արեւմ թեղ այն նպաստը պա-
կաս ըլլայ և նոյնպէս ալ Սուլթանին կեան-
քը :

Բայց քանի ոչ ըսինք թէ ժողովուրդը
իր ծոցին մէջ պատրիարքարաններ առի,
հարկ է որ յիշենք նաև թէ՛ կիպրոսէն ըս-
տացած մեր նամակներէն Վիլի տեղեկանանք
թէ՛ Տիար Յ. Քերեմեկան տարեկան 500
քիլօ ալիւր կը նուիրէ ձեռնարկածին և Արդ-
կը հարցնենք թէ՛ այդ լաւագոյն է պատ-
րիարքարանը թէ՛ ձեռնարկածին նախն Ժո-
ղովուրդի զաւակը : Ընթերցողը կրնան դա-
տել :

ՏՕՐԹ ԲՕՐՆՔԵԼՏ
ՎԱՍՏԱՆՆԻ ԿԵՆՏՆԱԹ ՀԱՍՏԱՆԱՐԱՆԷՆ

Նախկին Ներքին Թիւրքի վեհանախի զըլ-
խաւոր հիւանդանոցներուն : Մասնագէտ
միջանկարծիքին հիւանդութեանց, Բազմա-
կան արտի, կիպրոսի, քիթի և բերնի
հիւանդութեանց :

Ամէն օր հիւանդ կ'ընդունի կէս օրէ
առաջ ժամը 10 էն 12, իսկ կէս օրէ վեր-
ջը ժամը 3 էն 5, իր տունը ԵՄԻՆ փա-
շա փողոց, ԱՂԵՔԱՆԳՐԻՍ :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՒՊԱՐ ՓԱՏՅՅՆ ԱՐՁԱՆԸ. — Արդէն
ըսած էինք թէ՛ Կանադայիցիներն Հիւանդա-
նոցի բժշկապետ Տո. Շեմ Դէյի նախաձեռ-
նութեամբ սրտու զաւ Աղէքանգրիոյ մէջ
նուպար Փաշայի յիշատակին հօն. արձան
մը կանգնել :

Անցեալ օր տեղի ունեցած գումարա-
մի մը մէջ, առժամանակեայ նամատրամբը
լազմուց անգամները սրտեցին Աղէքանա-
րիւյ մէջ ընդհանուր հանգանակութիւն մը
բանալ, իւրաքանչիւր բաժինը 5 դր. ողջի-

Հին Գեղարքի օրը տեղի պիտի ունենայ
ն. վ. Պողոս Փառչյոյ պարահանգէսը, ու
րուն հրաւիրուած են Գահիրէի ամբողջ
high life:

ԵՐԵՎԱՆԻ ԺՈՂՈՎ. — Աւրաթ օրը
գումարուած էր Գահիրէի Ազգային վար-
չութեան Պատկ. Երեսփոխանական ժողովի
և կազմաւորուած Քաղաքական ժողովոյ
տեղ նոր ընտրութիւն կատարելով հետեւ-
եալ հինգ անձնաւորութիւններն պաշտօնի
կոչած է.

- Մեծ. Տիար Սեդրաք Գաւթեան
- » » Մկրտիչ Անդրանիկեան
- » » Եագուայ Կարապետեան
- » » Գաբրիէլ Խաչերեան
- » » Յովհաննէս Նարնուխ

Յարմար առթիւ մը Պատկ. Քաղաքա-
կան ժողովոյ նորընտիր անդամաց կենսագ-
րական ծանօթութիւնները պիտի հրատա-
րակենք «Արշալոյս»-ի մէջ, ինչ որ շահե-
կանութենէ զարկ չպիտի ըլլայ կարծենք:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՆՈՒԹԻՒՆ. — Ազ-
գային ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻԱՆ տնտեսի Եր-
րորդ պրակը հրատարակ ելած է:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԹՆԴԱՆՑՈՒՆԵՐԸ. — «Բի-
րամիտ» կը հարցնէ թէ՛ ի՞նչ եղած են և
գիպտական 6 թնդանօթները, որք պա-
տերազմի սկզբնաւորութեան ատեն թրանս-
վալ զրկուեցան. իրա՞ն է արդեօք, Կը-
տէ, թէ ատոնց երեք հատը անօթապէս
Պօէրնբէն գրաւուեցան:

ՍՓԻՆԲՍ. — Աղէքսանդրիա գտնուող
գերմանացի հնախոյճներ, սրունք քանի մը
ամիսներէ ի վեր քաղաքին շուրջը պեղու-
ներ կը կատարէին, Գօլտն Բօմբէի մօտ, Սէ-
րաբուսի աւերակներուն մէջէն փոքրիկ
Սփինքս մը գտած են:

ՈՂՋ ԹԱՂՈՒԱԾ. — Մէքսի պեղուածե-
րուն աշխատող երկու Պէտէփիներ, մին
10 և միւսը 14 տարեկան՝ հողակոյտի փլու-
զումի մը տակ մնացած են:

Փլատակներուն տակէն երկու խեղճե-
րուն գիպտները հանուելով Կառավարական
Հիւանդանոցը փոխադրուած են օրինական
ձեւակերպութիւնները կատարուելու համար:

Աւելորդ է ըսել թէ՛ երկուքն ալ յա-
ւիտենականութեան մէջ իրենց օրականնե-
րէն մնացած գումարը գանձելու գացած
են...

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ
ԿԻՐԱԿԻ 10 ՄԱՐՏ 1901

7381	8551	326	1854	6018	9086
8054	7261	1531	8715	9576	7528
6604	8235	9326	8480	7753	7420
8599	6833	4318	2961	9024	3282
	8574	7447	397		

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ
ԿԻՐԱԿԻ 10 ՄԱՐՏ 1901

802	2754	5357	455	812	878
1074	1406	1440	1468	1616	1636
2077	2613	2660	2828	2937	2977
3270	3656	4301	4556	4591	5040
5160	5366	6002	6986	7408	8993

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԱՆԻԿՅԵՐ


Պալատի փողոց. Խաչնէտարի սեփականութիւն, Պրիւթշլ Սթէյլի ճիշդ գիմաց,
Գաֆէ Տը Լա Պուրոի կից:

Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈԼՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԵՋ 6500 ՄԱՍՆԱՃՈՒՂԵՐ ՈՒՆԻ
Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկլէր ներն են ևւ ասոնցմէ մինչև ցարդ
17.000.000 ծախուած է:

400 է աւելի վկայականներով եւ մեսաշններով վարձատրուած, Երաշխատեալ մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական առուեսանաեղիսիւն մէջ ստացած է:
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե. Բ. ԽՅԻՎԱԿԱՆ ՏՊԸ



Կեղծերէն զգուշանալ,
ուշադրութիւն դարձնել իւ-
րաքանչիւր մեքենայի վրայ
Սինկլէր յասկանչիւն:
ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

Ձրի դասեր և նորագու-
թիւններ, Սինկլէր մեքենա-
յից համար, յաճախորդաց
տուններուն մէջ:
Վճարմանց Դիւրութիւն
Փոխանակութիւն ինքնաշիջ
եւ նորագութիւն ամեն կարգի
Մեքենայից

ՄԱՆԿԱԲԱՐՉ ՏԻՊԻՆ ՍՈՍԻԿ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ Շարա-Ապսիոյ-Ազիզ

Վերջերս իւր բնականութիւնը Ռուսոնֆիլէն
փոխադրած է Շարա Ապսիոյ Ազիզ, Աւել փառա-
Շէրիֆի պարտիզին դիմաց, Անմէտ պէյ Ապ-
սիւլ Բողզիի 20 թիւ սեփականութեան մէջ:

Տիպին Սօֆիկ Ազգապետեան իւր փորձա-
տութեամբ եւ յաջողակութեամբ արդէն ծանօթ
ըլլալով զանիւրէրնակ ազգայնոց եւ նոյն իսկ
օտարաց, աւելորդ կը համարուի զայն յանձնա-
բարէլ իւր խնամոցը պէտք ունեցողներուն:

Վկայեալ ազգատներուն համար ձրի
դարմանում:

ՄԻ՝ ՄՆԱՔ ԵՐԷԷ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՑԻՍԻ

Քանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատան մէջ
(ի Մուսքի) պիտի գտնէք մի-միայն 22 ՂՐՆ ի
նիքէլ, կոթէն լարուող սիրուն ժամացոյցնե-
րն որոց լաւ լամպիլը երաշխաւորեալ է:
Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցնե-
ր 120 ՂՐԵ է սկսեալ մինչև 2500 ՂՐՆ: Ինչ-
պէս նաև արծաթ սովեպատ, նիքէլ, և օք-
սիտէ ժամացոյցներ. պատի և քօնսօլի բազ-
մազան Բանտի ընէր և ամեն ճաշակի յար-
մար Գոհարեղէնք:

ձոխ հաւաքածոյ բուն Ամերիկէսն միօ.
նօկրաֆներու:

ՏՅԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳՆՈՒԻ 1 ՄԻԼԵՍ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամե-
նէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած
է կամ ինչպատիւրենց գումարած է 3 ՄԻԼԵՍ
480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ
և է ընկերութենէ մէկ միլեար աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ
ի Գահիրէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ըն-
կերութենէ աւելի երաշխաւորութիւններ,
ընդարձակ գործառնութիւններ և հրապա-
րակի վրայ աւելի ապահովագրութիւններ
ունի և աւելի ապահովագրի կը գանձէ:

ԱԼԷԻՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործա-
կատար յԱղեքսանդրիա